ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

ՀՐԱՄԱՆ

Թիվ 29-Լ

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 25.02.2020Թ. ԹԻՎ 12-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների համաձայն և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012թ. դեկտեմբերի 27-ի թիվ 1671-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետի և ՀՀ վարչապետի 2018թ. հունիսի 11-ի «ՀՀ ոստիկանության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 751-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 20-րդ կետի 8-րդ ենթակետի պահանջներով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ ոստիկանության պետի ժամանակավոր պաշտոնակատարի 25.02.2020թ. «Թիկնապահի և պահնորդի որակավորման ստուգման հանձնաժողովի կազմը և հանձնաժողովի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 12-Լ հրամանի 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 1-ի ենթակետում «պետի տեղակալ ոստիկանության գնդապետ Հ. Միրյան» բառերը փոխարինել «ՀԱԱԳՎ պետի պարտականությունները ժամանակավոր կատարող, ոստիկանության գնդապետ Է. Պետրոսյան» բառերով,

2) 4-րդ ենթակետում «հասարակական կարգի ապահովման վարչության լիցենզավորման և թույլտվության աշխատանքների կազմակերպման բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Ա.Ղազարյան» բառերը փոխարինել «կազմակերպական բաժնի պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Տ. Սահակյան» բառերով,

3) 8-րդ ենթակետում «տեսուչ /ի հաշիվ ավագ տեսուչի» բառերը փոխարինել «ավագ տեսուչ» բառերով:

2. Հրամանը հայտարարել թիկնապահի և պահնորդի որակավորման ստուգման հանձնաժողովի անդամներին:

ԳՆԴԱՊԵՏ **Վ.ՂԱԶԱՐՅԱՆ**

«10» 08 2020թ.

ք. Երևան